

# ԱՒԵՏԱԲԵՐ



Հայ Կաթողիկէ Ժողովրդապետութիւններու

22 յուլիս 2018

ԺԷ. Տարի

Թիւ 30

## Բ. ԿԻՐԱԿԻ ՎԱՐԴԱՎԱՌԷՆ ԵՏՔ



### ԺԱՄԱՄՈՒՏ

Միածին Որդի եւ Աստուծոյ Բան, եւ անմահ՝ Եւթեամբ, որ յանձն առիր մարմնանալ սուրբ եւ միշտ կոյս Աստուածածինէն, անփոփոխելիդ՝ մարդ դառնալով խաչուեցար, Զրիստոսն Աստուած, եւ մահովդ՝ մահը խորտակեցիր. մին անձերէն՝ Ամենասուրբ Երրորդութեան, արժանի փառքի՝ Յօր եւ Յոգւոյն հետ փրկե՛ մեզ:

### ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ ԱԶ

Փառքի թագաւոր Զրիստոսը, որ մեզի համար սուրբ Կոյսէն մարմնացաւ, խաչին վրայ համբերելով. միաբան երգով բարեբանեց:

Որ յանձն առաւ երեքօրեայ թաղումը, յարութիւն առաւ մեռելներէն իշխանութեամբ. միաբան երգով բարեբանենք:

Մեծ զօրութեամբ դժոխքի դռները խորտակեց, իր եկեղեցին զգեստաւորեց մեծ վայելչութեամբ, միաբան երգով բարեբանենք:

## **ՄԵՍԵՒԻ (Սաղմոս 64, 2 - 3)**

Աստուած իմ, Սիոնի վրայ կատարուած փառաբանութիւնը միայն քեզի կը վայելէ, եւ Երուսաղէմի մէջ քեզի աղօթքներ թող բարձրանան:

Աղօթքներս լսէ՛ եւ ամէն մարմնաւոր էակ՝ քեզի թող գայ, քեզի թող դիմէ:

## **ԸՆԹԵՐՅՈՒԱԾ**

**Պօղոս Առաքեալին Կորնթացիներուն ուղղած  
Առաջին Թուղթն է այս ընթերցուածը  
(1 Կոր. 6, 12-7, 11)**

Ամէն ինչ արտօսուած է ինծի, սակայն ամէն ինչ օգտակար չէ ինծի: Ամէն ինչ արտօսուած է ինծի, սակայն ես ամէն բանի չեմ ենթարկուիր: Կերակուրը որովայնի համար է եւ որովայնը՝ կերակուրին համար: Աստուած պիտի կործանէ ե՛ւ մին ե՛ւ միւսը: Մարմինը պոռնկութեան համար չէ ստեղծուած, այլ՝ Տիրոջ եւ Տերը՝ մարմինին համար: Աստուած, որ յարութիւն տուաւ Տիրոջ, իր զօրութեամբ մեզ ալ պիտի յարուցանէ: Չէ՞ք գիտեր, թէ ձեր մարմինները անդամներն են Զրիստոսի եւ մենք պիտի համարձակի՞նք անել Զրիստոսի անդամները ու գանոնք ընել պոռնիկի անդամներ. ամե-

նելին: Եւ կամ չէ՞ք գիտեր, թէ պոռնիկին միացողը մէկ մարմին կը կազմէ անոր հետ. որովհետեւ գրուած է՝ երկուքը մէկ մարմին պիտի ըլլան: Իսկ ով որ Տիրոջ կը միանայ, Տիրոջ հետ մէկ հոգի կը կազմէ: Փախէ՛ք ուրեմն պոռնկութենէ: Մարդուն գործած ամէն մեղք մարմինէն դուրս է, իսկ պոռնկացողը մարմինին մէջ կը մեղանչէ: Չէ՞ք գիտեր, որ ձեր մարմինը տաճարն է Սուրբ Յոգիին, որ կը բնակի ձեր մէջ եւ տրուած է ձեզի Աստուծմէ: Չէ՞ք գիտեր, թէ դուք ձեզի չէք պատկանիր: Դուք գնուած էք, ձեր գինը վճարուած է, ուստի Աստուած փառաբանեցէք ձեր մարմիններուն մէջ:

### **Ալէլուիա, Ալէլուիա,**

Դուն պիտի կանգնիս եւ գթաս Սիոնի, եկած է ժամը, ժամանակը հասած է որ գթաս անոր:

**(Սղմ.101, 14)**

**Ալէլուիա:**

## **ԱԲԵՏԱՐԱՆ**

### **Ս. ԱՄՈՒՍՆՈՒԹԻԻՆԸ**


**(Մատթ. 19, 1-12)**

Տէրն մեր Յիսուս Զրիստոս երբ ւաւրտեց այս քարոզները, մեկնեցաւ Գալիլիայէն եւ եկաւ Յրեաստան, Յորդանա-

ւնի միւս կողմը: Բազմաթիւ ժողովուրդ ետեւէն գնաց եւ բուժեց զանոնք: Փարիսեցիները մօտեցան եւ զինք փորձելու

համար հարցուցին. «Օրինաւոր է որ-  
ւիցէ պատճառով կին արձակել»: «Չէ՞ք  
կարդացած, պատասխանեց Յիսուս, որ  
Արարիչը սկիզբէն զանոնք արու եւ եգ  
ստեղծեց եւ ըսաւ. «Ասոր համար այր  
մարդը պիտի թողու իր հայրն ու մայրը  
եւ պիտի կապուի իր կնոջ եւ երկուքը պի-  
տի ըլլան մէկ մարմին»: Այսպէս ուրեմն  
անոնք այլեւս երկու մարմին չեն, այլ՝ մէկ  
մարմին: Թող ուրեմն մարդ չբաժնէ ինչ  
որ Աստուած միացուցած է»: Անոնք  
աւելցուցին. «Ինչո՞ւ համար ուրեմն Մով-  
սես հրահանգեց արձակման վկայագիր  
տալ եւ արձակել»: «Մովսես, պատաս-  
խանեց Յիսուս, ձեր սրտի խստութեան  
համար արտօսեց ձեզի ձեր կիները ար-  
ձակել, սակայն սկիզբէն այդպէս չէր:  
Կ'ըսեմ ձեզի, եթէ մէկը իր կինը արձակէ,  
առանց պոռնկութեան պատճառի եւ  
ուրիշի մը հետ ամուսնանայ՝ կը շնայ»:

Աշակերտներն ըսին. «Եթէ այս է վի-  
ճակը այր մարդու, կնոջ հանդէպ՝ Նա-  
խընտրելի է չամուսնանալ»: «Ամենքը  
այս լեզուն չեն հասկնար, պատասխա-  
նեց Յիսուս, այլ անոնք միայն, որոնք



տրուած է: Արդարեւ, կան ներքինիներ,  
որոնք ի ծնէ են, կան ներքինիներ, որոնք  
մարդու ձեռքով եղած են, կան նաեւ  
որոնք իրենք զիրենք ներքինի ըրած են  
Երկինքի Արքայութեան համար: Ով որ  
կարող է հասկնալ՝ թող հասկնայ»:

## **ԽՈՐՀՐԴ-ԱԾՈՒԹԻՒՆ**

### **ՅԻՍՈՒՍ / ՄՈՎՍԷՍ ԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆ / ԱՊԱՀԱՐՁԱՆ**

«Սկիզբէն այսպէս չէր»:

ԻԱ. դարու արդիականութեան եւ  
համաշխարհայնացումի ծիրէն ներս  
գոյութիւն չունի մնայունը: Ամէն բան  
ժամանակաւոր է, շարժուն եւ ճկուն:  
Այսպէս էր նաեւ մտայնութիւնը Զրիս-  
տոսի ժամանակաշրջանին. շուկայի  
տրամաբանութիւնն էր տիրապետողը,  
ուր ամէն բան սակարկելի էր եւ համա-  
ձայնագրերը կը ստորագրուէին ըստ  
պայմաններու եւ որոշ ժամանակի հա-  
մար, անոնց դադրումով՝ ինքնաբերա-  
բար ամէն բան խզուած կ'ըլլար: Եթէ  
այս օրէնքը ի զօրու է շուկային մէջ եւ  
ընդունելի, ուրեմն ինչո՞ւ չի գործադր-  
ւիր մարդկային բոլոր յարաբերու-  
թիւններուն մէջ, որոնք գլխաւորը կը

նկատուի ամուսնութիւնը:

Փարիսեցիները եւ անոնք, որոնք կը  
պաշտպանեն «առ ի փորձ ամուսնու-  
թիւնը», «համաձայնագրուած ամուլի  
կապը», «բազմակնութիւնը կամ մէկէ  
աւելի ամուսին ունենալը», «միասեռ-  
ականներուն ամուսնութիւնը», իրենք  
զիրենք կը մատնեն լուրջ հարցի մը:  
Մարդիկ կը տրամաբանեն ըսելով, թէ  
այդ ծնած է վայելելու համար կեանքը  
եւ կը մոռնան, թէ անոր ազատութիւնը  
կը դադրի հոն ուր կը սկսի մերձաւորին  
ազատութիւնը: Ասոնք կը մեղադրեն  
բոլոր անոնք, որոնք յանձնառու են ու  
կը պաշտպանեն Եկեղեցին եւ ամուս-  
նութեան սրբութիւնն ու գոյատեւումը,  
որոնք մարդուն մարմնին ու հոգիին

խորը արմատաւորուած եւ, եւ հաւատարմութեան ու սրբութեան պայմաններով: Ասոնք եւ գաղջ քրիստոնեաներ, Եկեղեցին կ'որակեն անմարդկային. «Ի՞նչ, կ'ըսեն, այս դժոխային կեանքը պիտի ապրինք մեր ամբողջ կեանքի տելողութեան, սխալ ընտրութիւն մը ըրած ըլլալու համար»: Փարիսեցիները կը հիմնեն իրենց գաղափարը Մովսէսի ապահարգան տնօրինումի օրէնքին հիման վրայ:

Այս երկու դիրքորոշումներէն ո՞ր մէկը երջանկութիւն կ'ապահովէ մարդուն, ընտանիքին եւ անդամներուն: Այսօրուայ Աւետարանը կու տայ պատասխանը: Յիսուս կը պաշտպանէ միութիւնը այր մարդուն եւ կնոջ միջեւ եւ կը հաստատէ անոր անքակտելիութիւնը եւ ամուսնութեան յարատելութիւնը եւ ոչ ոք կարող է հակասել Աստուծոյ Ծրագրին:

Ոմանք կ'առջարկեն. Միթէ Յիսուսի Աստուածը կը հակասէ՞ Մովսէսի Աստուծոյն: Ռ՞վ իրաւունք ունի. Մովսէ՞ս թէ Յիսուս: Մովսէս, Աստուծոյ մարդը, չի՞ կրնար սխալիլ, կը հաստատէ Յիսուս: Սակայն, Ան կը բացատրէ Մովսէսի արտօնութիւնը փարիսեցիներուն, որոնք վարժ էին մեքենաբար կիրարկելու օրէնքը եւ ստրկաբար յարգելու գիրը, անտեսելով անոր հոգին: Վարդապետը կը հրաւիրէ զանոնք մտքի գերբնական վերացումի: Ան կը բացատրէ, թէ աստուածային օրէնքը կը համապատասխանէ մարդուն եւ ընկերութեան հոգեկան ու ֆիզիքական տրամադրութեան: Աստուած կը ճանչնայ մարդը իր սահմանափակ կարողութիւններով ու տկարութիւններով եւ այս պատճառով, աւելի մեծ չարիքէն ազատելու համար՝ կը դիմէ միջին լուծումի մը. «Ձեր խստասրտութեան համար արտօնեց...»: Սակայն նոր ժամանակներ հասան, ուր մարդը հասնելով հոգեկան եւ մտային աւելի հասուն մակարդակի, Զրիստոսի լոյսով լուսա-



ւորուելով եւ Աստուծոյ շնորհքին ու իր կամքի ոյժին վստահելով՝ կարող է ապրիլ եւ գործել կեանքի Յեղինակին կամքին համաձայն, ճշմարտութեամբ, ինչպէս որ էր ստեղծագործութեան Սիրոյ ծրագրին սկիզբը:

Փարիսեցիները, իրենք զիրենք աւելի գիտուն ու իմաստուն նկատելով՝ փորձեցին Զրիստոսը շփոթութեան մատնել: Սրտագետ Յիսուս իմաստութեամբ պատասխանեց ու ըմբռնանց զիրենք, գերազանցելով մարդկային օրէնքը, որ կը նուսատացնէ մարդ արարածը ու կ'արթնցնէ անոր անասնական կիրքերը: Ան բացատրեց աստուածային անսխալ օրէնքը, որ կը յարգէ մարդուն արժանապատութիւնը, այր թէ կին, միասին ապրելու իրենց պարգեւուած աստուածային սէրը, եւ իրենց փոխադարձ սէրով ու նուիրումով վկայելու Անոր անսահման սիրնոյն եւ գթութեան, որպէս Յայր եւ հաւատարիմ եղբայր: Ան բացարձակօրէն հաստատեց աստուածային Սիրոյ ծրագրին ամուսնութեան կապի անլուծանելիութիւնն ու սրբութիւնը: